«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի կողմից
«30» 11 2020թ.
Արձանագրություն № 2

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 12 2020թ.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2020

1. ՆԱԽԱԲԱՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջն (այսուհետ՝ Քոլեջ) իր կողմից իրականացվող՝ կրթական ծառայությունների մատուցման գործընթացում առաջնորդվում է Քոլեջի առաքելությամբ, որակյալ կրթության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Կրթական ծրագրերի պարբերական մշտադիտարկումը և վերանայումը իրականացվում է Պետական կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Կրթական ծրագրերի վերանայման գործընթացները իրականացվում են ըստ անհրաժեշտության, համակարգված պլանավորմամբ և գործողություններով:

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումը ենթադրում է պարբերաբար ուսումնասիրություն և գնահատում, որը նպաստում է կրթական գործընթացների բարելավմանը:

Միևնույն ժամանակ արդյունավետ և որակյալ ծրագրերի առկայությունը կապահովեն կրթական գործընթացների համապատասխանությունը ՊԿՉ-ին և գործատուների հետ պարբերական փոխհամագործակցության միջոցով կնպաստեն մասնագիտական նոր ուղղվածությունների հայտնաբերմանը և նոր կրթական ծրագրերի ներդրմանը:

Մշտադիտարկման և վերանայման խնդիրն է պատշաճ ուսումնասիրել և գնահատել կրթական ծրագիրը, վերջնարդյունքները, կիրառված դասավանդման և ուսուցման մեթոդաբանությունը և դրա արդյունավետությունը, գնահատման համակարգը, անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, վեր հանել կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը և մշակել համապատասխան միջոցառումներ կրթական ծրագրի հետագա բարելավման համար:

Վերոնշյալ նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար վերանայման գործընթացը ենթադրում է հետևյալ փուլերը.

1. Վերանայման գործընթացների ժամանակացույցի սահմանում:
2. Ուսումնասիրում, արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակում և քննարկում Քոլեջի ղեկավար կազմի հետ:
3. Գործողությունների ծրագրի իրագործում, արդյունքների ուսումնասիրություն:
4. Բարելավման պլանի մշակում և իրականացում:
5. Արտաքին գնահատում (ըստ անհրաժեշության):

Սույն ընթացակարգի շրջանակներում կիրառվում են հետևյալ դրույթները.

1. ***<u>Կրթական ծրագրի մշտադիտարկում</u>***. կրթական ծրագրի մշտադիտարկումը ենթադրում է վերջինիս պարբերաբար ուսումնասիրություն՝ համապատասխան տվյալների և հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվության միջոցով:
2. ***<u>Կրթական ծրագրի վերանայում</u>***. կրթական ծրագրի վերանայումը ենթադրում է վերջինիս բոլոր բաղկացուցիչ մասերի պարբերական խորը ուսումնասիրություն:

2. ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Կրթական ծրագրի մշտադիտարկման և վերանայման նպատակն ու խնդիրներն են.

- Աջակցել կրթական ծրագրի և կրթական գործընթացի որակի բարելավմանը:
- Ապահովել դասավանդման և ուսուցման որակը:
- Գնահատել ուսանողների կողմից ձեռքբերված կրթական վերջնարդյունքների մակարդակը:

- Ապահովել կրթական ծրագրի համապատասխանությունը ներկայիս և պոտենցիալ ուսանողների, գործատուների պահաջներին:
- Ապահովել համապատասխան միջոցառումների և ծրագրերի առկայությունը՝ լավագույն փորձը տարածելու, իսկ բացթողումները շտկելու նպատակով:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Գնահատել ծրագրի, դասավանդման, ուսումնառության, ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների համապատասխանությունը ՊԿՉ-ի պահանջներին, սահմանած նպատակներին հասնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:
- Բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները, վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները, ծրագրում ու դասընթացներում անհրաժեշտ խորհրդատվությունների տրամադրում:
- Բացահայտել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մշակել ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ և գործողություններ:

4. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

4.1. Մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը:
4.2. Ուսումնական պլանները
4.3. Առարկայական/մոդուլային ծրագրերը:
4.4. Դասավանդման գործընթացները:
4.5. Ուսանողների գնահատման մեթոդները և այլն:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. <u>Կրթական ծրագրերի մշտադիտարկում</u>

5.1.1 Կրթական ծրագրերի մշտադիտարկումը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր ՄԿԾ-ի համապատասխան հանձնաժողովի կողմից:

5.1.2 Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր ուստարվա համար մշակում է մշտադիտարկման ժամանակացույցը և պատասխանատուներին:

5.1.3 Մշտադիտարկումը իրականացվում է դասալսումների, ուսանողների և դասախոսների հետ խորհրդակցությունների, հարցումների միջոցով ստացված տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

5.1.4 Յուրաքանչյուր ուստարվա ավարտին՝ հանձնաժողովի նախագահը քննարկում է հավաքագրված տեղեկատվությունը պատասխանատու ամբիոնի հետ: Քննարկման արդյունքում պատրաստվում է նաև հաշվետվություն, որը ամփոփում է վերլուծված տեղեկատվությունը և բարելավմանն ուղղված միջոցառումները:

5.1.5 Հաշվետվությունը տրամադրվում է Մանկավարժական խորհրդին քննարկելու, առաջարկություններով հանդես գալու և առաջարկված միջոցառումների ծրագրին հավանություն տալու նպատակով:

5.1.6 Մանկավարժական խորհրդը, հաշվետվությունը ուսումնասիրելուց հետո պատրաստում է հաշվետվություն (1-2 էջ) իրենց առաջարկություններով և դիտողություններով ու ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին:

5.1.7 Մանկավարժական խորհրդը մշտադիտակման և Քոլեջի ՈԱ պատասխանատուների հետ իրականացնում է խորհրդատվություն կրթական ծրագրերը իրականացնող դասախոսական կազմի հետ՝ առաջարկությունները, դիտողությունները և միջոցառումների ծրագիրը իրագործելու վերաբերյալ:

5.1.8 Միջոցառումների իրագործման վերաբերյալ հաշվետվությունը քննարկվում է Մանկավարժական խորհրդի ուսումնական տարվա վերջին նիստում:

5.2 Կրթական ծրագրերի վերանայում

5.2.1. Կրթական ծրագրերի ընթացիկ վերանայումը իրականացվում է յուրաքանչյուր 2-4 տարին մեկ: Որոշ հանգամանքների առկայության պարագայում կրթական ծրագրի վերանայումը կարող է հետաձգվել՝ հիմք ընդունելով վերանայվող մասնագիտության կրթական ծրագիրը կառավարող ամբիոնի վարիչի հիմնավորումը:

5.2.2. Վերանայման համար կրթական ծրագրերի ընտրությունը կատարվում է համապատասխան ամբիոնի վարիչների, դասախոսների և ՈԱ պատասխանատուի խորհրդակցության արդյունքում:

5.2.3. Կրթական ծրագրերի վերանայումն իրականացնում է հատուկ հանձնաժողովը:

5.2.4.Վերանայման գործընթացի մեկնարկից մեկ ամիս առաջ ՈԱ պատասխանատուն ուղարկում է ծանուցում՝ կրթական ծրագրերի վերանայման գործընթացն սկսելու վերաբերյալ:

5.2.5. Վերանայման գործընթացի մեկնարկից առաջ ՈԱ պատասխանատուն կազմակերպում է խորհրդատվություն հատուկ հանձնաժողովի անդամների հետ՝ կրթական ծրագրերի վերանայման ընթացակարգերի, գործընթացների, անհրաժեշտ փաստագրման վերաբերյալ:

5.2.6. Խորհրդակցության արդյունքում մշակվում է վերանայման ժամանակացույցը և սահմանվում պատասխանատուներ:

5.2.7.Ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովը պատրաստում է հաշվետվություն արդյունքների վերաբերյալ, կրթական ծրագրերի առաջարկվող փոփոխությունների նախագիծ և իրագործման միջոցառումների պլան:

5.2.8. Առաջարկվող փոփոխությունները և միջոցառումները կարող են դասակարգվել.

- **Էական** կրթական ծրագրի կասեցման կամ հետագա վերակառուցման:
- **Ցանկալի** ընդհանուր առմամբ թերություններ առկա չեն, սակայն ցանկալի է միջոցառումներ իրականացնել կրթական գործընթացի կազմակերպման որակը բարձրացնելու համար:
- **Օրինակելի** կրթական ծրագրի կազմակերպման գործընթացում թերություններ չեն հայտնաբերվել և որպես լավագույն փորձ՝ երաշխավորվում է տարածման Քոլեջում:

5.2.9.Հանձնաժողովի նախագահը փոխանցում է վերոնշյալ փաստաթղթերը Մանկավարժական խորհրդին՝ որոշում կայացնելու նպատակով:

5.2.10. Մանկավարժական խորհրդի կողմից որոշումը կայացնելուց հետո հանձնաժողովի նախագահը կազմակերպում է ամփոփող խորհրդակցություն հետագա քայլերը քննարկելու և միջոցառումների ծրագիրը իրականացնելու համար:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

6.1 Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել՝ ամբիոնների վարիչներ, դասախոսներ, Ուսանողական խորհրդի երկու ներկայացուցիչներ և ՈԱ պատասխանատուն, ով նաև հանձնաժողովի նախագահն է:

6.2 Հանձնաժողովի կազմը հաստատվում է Քոլեջի տնօրենի կողմից: